Եղեգնաձորի թիվ 2 հիմնական դպրոց ՊՈԱԿ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ ‹‹Հայկական լեռնաշխարհի ընդհանուր բնութագիրը և ուսուցման մեթոդները››

Ուսուցիչ՝ Ավետիսյան Նարինե

Ղեկավար՝ Ռուզաննա Բարսեղյան

Եղեգնաձոր 2022

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

<<Հայրենիքից զատ, Հայրենիքից դուրս ինձ համար խաբուսիկ են բոլոր դրախտները>>

Գարեգին Նժդեհ

Պատմությունը ժողովրդի կենսագրությունն է, այն բացահայտում է ժողովրդի ծագումնաբանությունը, առաջացման ժամանակաշրջանը, աշխարհագրական միջավայրը, անցած ուղին, ձևավորված ազգային բնավորությունը, ինքնությունը, գիտակցությունը, կենսակերպի փորձը և այլն։

Մեր ավագ սերունը մեզ պատմել է այն ինչին ականտես է եղել, մենք պատմում ենք մեր կրտսեր սերդին այն ինչը մենք ենք տեսնում, բայց մենք ունենք 5000 – 6000 տարվա պատմություն, որը մեզ է հասել գրավոր արձանագրությունների, ժայռապատկերների, պատկերագրությունների, այլ նշանագրերի, բանավոր խոսքի միջոցով և այլ ճանապարհներով։

Այս ամենը պահպանվել է ոչ միայն ներկայիս Հայաստանի Հանրապետությունում, այլ ամբողջ Հայկական լեռնաշխարհի տարածքում։ Այդ բոլոր վկայությունների մեծամասնությունը նկարագրում է հայ ժողովրդի պատմության հնագույն ժամանակաշրջանից մինչև ուշ միջնադար։ Մեզնից յուրաքանչյուրն շատ լավ գիտի իր յուրայինի կենսագրությունը, իսկ որքանո՞վ ենք տեղեկացված սեփական ազգի պատմության, կամ ինչպես վերոգրյալում նշել ենք, ազգային կենսագրության մասին։

Յուրաքանչյուր առարկայի ուսուցիչ նախքան դասարան գնալը և դասապրոցեսին անցնելը իր առջև գերխնդիր է դնում, թե ի՞նչ մեթոդով աշխատի, որ և՛ հետաքրքիր լինի աշակերտին, և՛ դյուրըմբռնելի։ Ահա, այս նույն սկզբունքով էլ աշխատում է պատմության ուսուցիչը, ավելին ասենք, պատմության ուսուցչի առջև դրված է դասը ճիշտ մատուցելու խնդիր, որպեսզի սովորողը ըմբռնի և ընկալի պատմական անցյալի դրական և բացասական կողմերը, սխալները չկրկնելու, իսկ արդյունավետ գործերը համալրելու հարցը, քանզի մենք՝ ավագներս, պետության և ազգայինի պահպանման հարցը հանձնելու ենք եկող սերնդին։

Այս ամբողջ բարոյահոգեբանական և բարոյախրատական կետերի մեկնարկը պետք է լինի «Հայկական լեռնաշխարհ» թեմայի ուսուցումից։

ԳԼՈՒԽ I
ԱՇԽԱՏԱՆՔ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՀԵՏ
(նկարագիր)

Մեր հետազոտական աշխատանքի թեման է **«Հայկական լեռնաշխարհը»:** Աշակերտները հիմնականում փորձում են շրջանցել այս դասընթացը, քանի որ այն բարդ է սովորել: Այստեղ էլ առաջանում է ևս մեկ հարց, իսկ ինչպե՞ս անել, որպեսզի դասընթացը կազմակերպվի պատշաճ կարգով, և ամենակարևորը, սովորողները կարողանան պատկերացում կազմել Հայկական լեռնաշխարհի մասին:

Արդի կրթությունը թույլ է տալիս առավել ազատ անցկացնել դասընթացը, դասանյութը կազմել բազմապիսի նորարարական մեթոդներով:

Առաջին հերթին, աշակերտներին բավականաչափ զբաղեցնում են սոցիալական ցանցերը և սովորելու ժամանակ շատ քիչ է մնում: Սովորելու գործընթացը հնարավոր դարձնելու համար, կրթության համակարգը պետք է փորձի գրավել աշակերտների ուշադրությունը[1]: Երբ աշակերտը կենտրոնացնում է ուշադրությունը, ուսուցանվող նյութը տեղափոխվում է աշխատանքային կամ կարճաժամկետ հիշողության տիրույթ[2]:

Այս պարագայում, ուսուցիչը պետք է աշակերտի «թույլ կողմը», օրինակ՝ ինտերնետային հետաքրքրվածությունը, դարձնի իր համար գործիք. դիցուք՝ աշակերտը սիրում է համացանցով տարվել, ապա կարելի է հանձնարարել աշխատանք համացանցից, օրինակ՝ *«Սիրելի՛ աշակերտ, քեզ հանձնարարում եմ համացանցից ներբեռնել Հայկական լեռնաշխարհի գետերի ու խոշոր լճերի նկարները, համապատասխան տեղեկություններով» և այլն:*

Շատ կարևոր է մեթոդի ճիշտ ընտրությունը, սակայն նախքան մեթոդի ընտրելը ուսուցիչը պետք է լավ ճանաչի դասավանդվող դասարանի յուրաքանչյուր երեխայի ընդունակությունը, նախասիրությունը, ձեռք բերած գիտելիքները, աշխատասիրության աստիճանը և այլն:

Մեր հետազոտական աշխատանքը արդյունավետ դարձնելու համար կիրառել ենք այս սկզբունքները, կազմել ենք սահիկաշար, կատարել ենք խմբային աշխատանքի

---

[1] **Ս. Խաչատրյան,** Ուսուցման արդյունավետ հնարներ, Երևան 2020, էջ՝ 9:
[2] **Ս. Խաչատրյան,** նշվ. աշխ., էջ՝ 10:

միջոցով մտքի քարտեզագրում, կիրառել ենք T-աձև մեթոդ, իսկ դասի ավարտին, վերջնարդյունքը տեսնելու համար օգտվում ենք լոտո – խաղ և ԳՈՒՍ – ի մեթոդներից:

Դասին պետք է հիմնական շեշտը դնել՝ Հայկական լեռնաշխարհի սահմաններին, լեռներին – լեռնաշղթաներին, գետերին – լճերին, վարչական բաժանմանը և այն ինչը մեզ է հասել ներկայիս Հայաստանի Հանրապետության տարածքում:

Դասաընթացը կազմակերպելու համար շեշտը դնում ենք աշակերտակենտրոն ուսուցման վրա, այն է՝ դասարանը բաժանում ենք խմբերի. առաջին խմբին հանձնարարում ենք, որպեսզի մտքի քարտեզագրման միջոցով կազմեն Հայկական լեռնաշխարհի սահմանները, երկրորդ խմբին՝ Հայկական լեռնաշխարհի լեռնաշղթաները, խումբ երրորդ՝ Հայկական լեռնաշխարհի և ՀՀ ամենաբարձր լեռնագագաթները, խումբ չորրորդ՝ Հայկական լեռնաշխարհի խոշոր գետերը, խումբ հինգ՝ Հայկական լեռնաշխարհի խոշոր լճերը, խումբ վեց՝ Հայկական լեռնաշխարհի պատմավարչական բաժանումները: Անշուշտ, այսքանով չենք սահմանափակվում, սովորողների կատարած աշխատանքները և սահիկաշարը պետք է համատեղ կիրառել: Աշակերտների նկարագրածին զուգահեռ պետք է ցուցադրել իրական պատկերներ, փաստավավերագրական ֆիլմից հատված կամ տեսահոլովակ՝ լիարժեք պատկերացում ստանալու համար:

Ինչո՞ւ ենք օգտագործել T-աձև մեթոդը….այն մեզ հնարավորություն է տալիս, որպեսզի հասկանանք կարող են արդյո՞ք աշակերտները արագ կազմեն աղյուսակ միանգամից նշելով այն ռեսուրսները, որոնք կան Հայկական լեռնաշխարհում և, որոնք մնացել են ՀՀ տարածքում:

Նմուշ՝ T-աձև մեթոդ

Հայկական լեռնաշխարհ	Հայաստանի Հանրապետություն

Այս մեթոդների կիրառությունը նախատեսված է երկու դասաժամի համար. երկրոդ դասին թեման ամփոփելու և ամրապնդելու համար կազմակերպում ենք խաղ՝ «Լոտո»:

Նախապես կազմում ենք հարցեր, գրում ենք թղթիկի վրա և ծալում ենք այնպես, որ չերևա, լցնում ենք կազմած հարցերը զամբյուղի մեջ: Առաջին ճիշտ պատասխանողը զամբյուղը մոտեցնում է երկրորդ աշակերտին, ով ճիշտ պատասխանում է մյուսն է փոխանցում զամբյուղը….այնքան ժամանակ այսպես շղթայաձև պտտվում է զամբյուղը դասարանում՝ մինչև ավարտվում են կազմած հարցերը: Իսկ հետո, ամփոփելու և վերջնարդյունքը տեսնելու նպատակով, գրատախտակին կազմում ենք ԳՈՒՍ – ի մեթոդը և լրացնում ենք:

Հաջորդ գլխում Դուք կտեսնեք Մեթոդների կիրառությունը թեմայի մեջ:

Նմուշ՝ ԳՈՒՍ – ի մեթոդ

Ի՞նչ գիտեինք	Ի՞նչ իմացանք	Ի՞նչ կուզենայինք իմանալ

Արդի կրթությունը աստիճանաբար անցնում է աշակերտակենտրոն ուսուցման, սակայն, եթե ուշադրություն դարձնենք մանկավարժության ոլորտի գիտակներին, ապա կտեսնենք իրենց հորդորը, որ պետք է աշակերտներին վստահել և աշխատացնել, թույլ տալ որպեսզի իրենք կարողանան գտնել հարցերի պատասխանները, այդպես կյանքում իրենք կկարողանան հաղթահարել կենսակերպում առաջացած խնդիրները:

«Աշակերտների անհատականության լիարժեք զարգացման հիմնական գործիքը աշխատանքային գործունեությունն է» - *Մակարենկո*

«Մի սովորեցրեք ուսանողին, այլ միայն օգնեք նրան սովորել» - *Ուշինսկի*

ԳԼՈՒԽ II
ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ

Դասը սկսելիս ուսուցիչը առաջնահերթ պետք է օգնի աշակերտներին, որպեսզի կարողանան տարբերակել Հայաստան և Հայկական լեռնաշխարհ հասկացությունները:

Տարբերելու համար ներկայացնում ենք Հայկական լեռնաշխարհի քարտեզը, որի վրա հստակ արտահայտված է Հայաստանի Հանրապետությունը: Ուսուցչի հարցադրումից՝ *(«Հարգելի՛ աշակերտներ, ինչպե՞ս կներկայացնեք Հայաստան և Հայկական լեռնաշխարհ հասկացությունների տարբերությունը»)*, և աշակերտների բոլոր կարծիքները լսելուց հետո, տալիս ենք պարզ բացատրություն. **Հայաստան – Արմենիան** միանգամայն որոշակի տարածք զբաղեցնող երկիր է և աշխարհի բազմաթիվ լեզուներով հրատարակված աշխատություններում միանշանակ ներկայացված[1]:

Հայկական լեռնաշխարհը տեղադրված է Փոքր Ասիա թերակղզուց արևելք մինչև Կուր – Արաքսյան դաշտավայրը[2]:

[1] **Հ. Կ. Գաբրիելյան,** Հայկական լեռնաշխարհ, ԵՊՀ հրատ., Երևան 2000, էջ՝ 9:
[2] **Հ. Կ. Գաբրիելյան,** նշվ. աշխ., էջ՝ 10:

Այնուհետև, սովորողները գծում են շրջանագիծ, որի վրա պատկերում են քառաձև բաժանում՝ նշելով հյուսիսը, հարավը, արևելքը և արևմուտքը: Ստացված պատկերի վրա սկսեն կազմել Հայկական լեռնաշխարհի սահմանային քարտեզը:

ՊԱՏԿԵՐ № 1



Բայց ստացված պատկերից զատ, աղյուսակաձև գրում են թե ինչ են պատկերել

Աղյուսակ № 1

1.	Հյուսիս	Եզերվում է Կուր գետով
2.	Հյուսիս – արևմուտք	Պոնտոսի լեռներ
3.	Հարավ	Հայկական Տավրոսի լեռնաշղթա, Հյուսիսային Միջագետքի հարթավայր

4.	Արևելք	Հասպից ծով, Իրանական սարահարթ, Ուրմիա լիճ
5.	Արևմուտք	Անտիտավրոսի լեռները բաժանում են Փոքրասիական սարահարթից
ՀԻՇԵՆՔ՝		
1.	Հայկական լեռնաշխարհ, կամ **Լեռնային Երկիր**, կամ **Լեռնային կղզի**	
2.	Լեռնաշխարհի կենտրոնական մասը կոչվում է **Միջնաշխարհ**	

2.1 Հայկական լեռնաշխարհի լեռնաշղթաները:

Առաջնահերթ, աշակերտներին պետք է ասենք, որ Հայկական լեռնաշխարհում կան բազմաթիվ խոշոր լեռնաշղթաներ, այնուհետև, առավել հասանելի և մատչելի դարձնելու համար նորից կազմում ենք մտքի քարտեզագրում: Միանշանակ գունավորում ենք վայրերը և աղյուսակում նույն գույներով նշում ենք անվանումները:

ՊԱՏԿԵՐ № 2



Աղյուսակ № 2

1.	1 – ը	Փոքր Կովկասի լեռնաշղթա
2.	2 – ը / 2 – ը / 2 – ը / 2 – ը	Զավախքի լեռն./2 , Գուգարք լեռն./2 , Գեղամա, Զանգեզուր
3.	3 – ը	Արցախի լեռներ

2.2 Հայկական լեռնաշխարհի և ՀՀ ամենաբարձր լեռնագագաթները:

Այժմ, պետք է աշակերտներին բացատրել Հայկական լեռնաշխարհի և ՀՀ ամենաբարձր լեռնագագաթները. կրկին օգտվում ենք մտքի քարտեզագրում մեթոդից: Այս անգամ համարակալում ենք լեռնագագաթները: Ճիշտ նույնությամբ, ինչպես նախորդ անգամ, գունավորում ենք տարբերակելու համար, որից հետո բնականաբար, հաղորդում ենք այնպիսի լրացուցիչ տեղեկություն, որը սովորողը չի շփոթի և կհիշի: Քանի որ սովորողները լեռնաշղթաները ուսումնասիրելիս Գեղամա լեռների մասին սովորել են, հարկ ենք համարում, հավելել, որ Գեղամա լեռների կենտրոնական մասում է գտնվում Ածդահակ լեռը[1], որի բարձրությունն է 3597 մ, իսկ անվանումը իրենց հայտնի է հայոց բանահուսությունից՝ «Տիգրան և Ածդահակ» վիպերգից *(Ածդահակ – Մարաց թագավորի և վիշապի անուն[2]):*

ՊԱՏԿԵՐ № 3



Աղյուսակ № 3

1.	1 – ը	Հայկական Պար լեռնաշղթա	Սկսվում է Արարատի լեռնագագաթից՝ արևելքից դեպի արևմուտք, Հայկական լեռնաշղթան բաժանելով հավասար երկու մասի՝ հյուսիսային և հարավային:
2.	2 – ը, 2 – ը	Մեծ և Փոքր Մասիս, Սիփան	Մեծ Մասիս – 5165 մ Փոքր Մասիս – 3925 մ Սիփան – 4434 մ
3.	3 – ը, 3 – ը, 3 - ը	Արագած, Կապուտջուղ, Ածդահակ	Արագած – 4195 մ Կապուտջուղ – 3904 մ Ածդահակ – 3597

[1] Հայկական սովետական հանրագիտարան, հտ. I, Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի հրատ., Երևան 1974, էջ՝ 133:
[2] Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հտ. I, ԵՊՀ հրատ., Երևան 1986, էջ՝ 54:

2.3 Հայկական լեռնաշխարհի խոշոր լճերը

Աշակերտների մյուս խումբը կազմում է Հայկական լեռնաշխարհի խոշոր լճերին վերաբերող մտքի քարտեզագրում:

ՊԱՏԿԵՐ № 4



Աղյուսակ № 4

Սևանա լիճ / Գեղամա ծով	Ծովի մակարդակից բարձր է՝ 1916 մ: Ջուրը քաղցրահամ է, ընդունում է 30 գետակ, դուրս է հոսում միայն Հրազդան գետը: Հայտնի է իշխան ձկնատեսակով:
Վանա լիճ / Բզնունյաց ծով	Ծովի մակարդակից բարձր է՝ 1720 մ: Ունի չորս կղզի՝ Կտուց, Լիմ, Արտեր, Աղթամար: Ջուրն աղի է: Միակ ձկնատեսակը տառեխն է:
Կապուտան / Ուրմիա լիճ	Ծանծաղ լիճ, զուրկ է բուսական և կենդանական աշխարհից ջրի աղիության պատճառով:

Կազմում են նորից աղյուսակ՝ հստակեցնելով լճերի մասին իրենց տեղեկությունները: Ուսուցչուհին լրացնում է դասագրքային նյութը, Հայկական լեռնաշխարհի խոշոր լճերի մասին՝ ներկայացնելով լրացուցիչ տեղեկություններ:

Սկսենք **Սևանին** պատկանող Գիլի լճից. Գիլի լիճ, Զոդի լճակ, Մազրայի լճակ, մինչև 1954՝ լիճ ՀՀ Գեղարքունիքի մարզում՝ Սևանա լճի հվ-արլ-ում՝ Մասրիկի դաշտում: Եղել է ծանծաղ և ճահճապատ: Անցյալում կապված էր Սևանա լճի հետ, որի մակարդակն իջնելու հետևանքով չորացել է, բնադրող թռչունների քանակը քչացել[1]:

Գիլին մի քանի խնդիր էր լուծում. առաջին՝ Մասրիկ գետի ջրերի համար հանդիսանում է ֆիլտր, երկրորդ՝ թռչնաշխարհի միգրացիոն կացարան, երրորդ՝ ձկնաշխարհի բազմացման լավ պայմաններ ապահովող վայր[2]:

Վանա լճի մասին հետաքրքիր է իմանալ հույն պատմիչ, աշխարհագիր Ստրաբոնի նկարագրից *«…լիճը պարունակում է բորակ[3], որով շորեր են լվանում ու մաքրում[4]»,* այինքն՝ այդ ջուրը խմելու համար պիտանի չէ: Ըստ նրա՝ Վանա լճի ուղիղ մեջտեղով է հոսում Տիգրիս գետը, և միայն այդ հատվածն է քաղցրահամ, իսկ մնացածը՝ աղի, այնուհետև, նորից անցնում է ջրի տակ և մեկ այլ տեղից դուրս է գալիս:

Ուրմիա լճի ավազան – գոգավորությունը իր ծագումով և լանդշաֆտներով նման է Արաքսի ավազանի կիսաանապատներին[5]:

Անհրաժեշտ է աշակերտներին հաղորդել լրացուցիչ տեղեկություն Հայկական լեռնաշխարհի խոշորագույն լճերի ներկայիս վիճակի մասին: Օգտվելով bestmap.ru կայքից աշակերտները ակնհայտ կտեսնեն տարբերությունը. Ուրմիա լիճը գրեթե ամբողջությամբ ցամաքած է, իսկ Սևանա և Վանա լճերը՝ նվազած:

Դրանից հետո կարելի է ցույց տալ, որ Արալի ծովը կամ լիճը[6] նույնպես ցամաքած է. դա նշանակում է, որ կազմավորվում է նոր աշխարհագրական տեղանքներ,

---

[1] Հայաստանի բնաշխարհ *(հանրագիտարան),* Երևան 2006, էջ՝ 149:

[2] ***Մատչելի է՝*** https://www.ecolur.org/hy/news/water/2750/ ***հասանելի է՝ [21.08.2022թ.]***

[3] **Բորակ** – քիմիական աղ, բորակատ կալի, գտնվում է հողի մեջ, պատրաստում են պայթուցիկ նյութեր, տե՛ս **Ստ. Մալխասեանց**, Հայերէն բացատրական բառարան, I հտ., Հայկական ՍՍՌ պետական հրատ., Երևան 1944, էջ՝ 387:

[4] **Ռ. Նահապետյան,** հոդված՝ «Հույն աշխարհագիր Ստրաբոնի ազգագրական տեղեկությունները Հայաստանի և հայերի մասին», ***մատչելի է՝*** http://ysu.am/files/1-1475054501-.pdf ***հասանելի է՝*** [21.08.2022թ.]

[5] **Հ. Կ. Գաբրիելյան,** նշվ. աշխ., էջ՝ 13:

՝ Արալի ծով կամ լիճ. գտնվում է Կարակալպակիայում՝ Ուզբեկստանի կազմում: Լիճ է համարվում իր խորության համար, իսկ ծով՝ լայնության:

որի պատճառով կարող է սկսվել նոր պատերազմներ՝ սահմանների կամ նոր տարածքների ձեռքբերման համար:

ՊԱՏԿԵՐ № 1 Հայկական լեռնաշխարհի պատմական քարտեզը՝ լճերի ցուցադրում

ՊԱՏԿԵՐ № 2 Հայկական լեռնաշխարհի քարտեզը տիեզերքից՝ լճերի ցուցադրում



ՊԱՏԿԵՐ № 3 Արալի ծով կամ լիճ Կարակալայի տարածքում՝ Ուզբեկստան

ՀԻՇԵՆՔ՝ վճիտ ջրեր ունեն	
1.	ՀՀ – ում է Արագածի վրայի Քարի լճակը
2.	Հայկական լեռնաշխարհում է Նեմրութի խառնարանային լիճը

Խոսքը պետք է եզրափակել այն կետով, որ և՛ Հայկական լեռնաշխարհը, և՛ ՀՀ – ը «հարուստ» է գեղատեսիլ ջրվեժներով….

2.4 Հայկական լեռնաշխարհի գետերը

Քանի որ մյուս խմբին հանձնարարված էր կազմել Հայկական լեռնաշխարհի գետերը, աշակերտները մտքի քարտեզագրման միջոցով պատկերել են այն, բայց ներկայացնում են բաց խոսքով:

Եփրատն ունի երկու ճյուղ՝ Արևմտյան և Արևելյան: Արևմտյան Եփրատը սկիզբ է առնում Էրզրումից հյուսիսում ընկած Ծաղկավետ լեռներից: Արևելյան Եփրատը մեզ հայտնի է Արածանի անունով սկիզբ է առնում Ծաղկանց կեռներից: Երկու գետերի ուղղությունն էլ արևելքից արևմուտք է. գետերը միախառնվում են ակն քաղաքի մոտ, իսկ հարավում միանալով Տիգրիսին թափվում է Պարսից ծոց:

Նախքան շարունակելը, հարկ համարում ուշադրություն դարձնել մի նրբությանը. հաճախ են եեխաները շփոթում Ծաղկավետը և Ծաղկանցը, իսկ ինչպես օգնել այս դեպքում: Փորձենք խնդիրը լուծել կեղծ ստուգաբանության միջոցով, այն է՝ *«Ծաղկավե**տ**ից* է բխում *Արևմ**տ**յան* Եփրատը» – ուշադրություն դարձրեք, որ երկու բաղադրիչներում կա **«տ»,** իսկ այժմ՝ «**Ծաղկանցից** է բխում **Արևելյան** Եփրատը»՝ դիտարկենք այսպես, ուրեմն՝ «արևելք» - նշանակում է արևն է դուրս գալիս, իսկ «ծաղկանց»՝ նոր է սկսում բողբոջել, այսինքն՝ երկու բաղադրիչներն էլ ցույց են տալիս գործողություն, ընթացքի մեջ լինել:

Որքան էլ ակադեմիական և գիտական հարթակում սխալ համարվի «կեղծ ստուգաբանության» մեթոդը, այնուամենայնիվ, այն օգնում է աշակերտներին. փորձը ցույց է տալիս, որ աշակերտները չեն կենտրոնանում թե ինչպես են սովորել և ինչ մեթոդով, այլ ոգեշնչվում են, որ նոր և դժվար հիշվող նյութը այլևս չեն մոռանում:

Մյուս գետը **Ճորոխն** է, որը սկսվում է Էրզրումից դեպի հյուսիս՝ Խաչափայտի լեռներից, հոսում է արևմուտք, հասնում է հյուսիս – արևելք և Բաթում քաղաքի մոտ լցվում է Սև ծով:

Այժ տեղափոխվում ենք Հայկական լեռնաշխարհի հարավային շրջան, որտեղ էլ հոսում է **Տիգրիս:** Այն նույնպես ունի երկու ճյուղ՝ Արևմտյան և Արևելյան:

Արևմտյանը սկիզբ է առնում Ծովք լճից, իսկ Արևելյան Եփրատը Հայկական Տավրոսից: *Հիշե՛նք, որ Տիգրիսն ու Եփրատը միախառնվում են և թափվում են Պարսից ծոց:*

Կուր գետը հիմնականում Հայկական լեռնաշխարհի սահմաններից դուրս է, այն սկիզբ է առնում Տայք նահանգում[1]: Կուր գետը միախառնվելով Արաքսի *(Երասխի)* հետ թափվում է Կասպից ծով:

Արաքս *(հնում՝ Երասխ)* սկսվում է Բյուրակնյան կամ Սրմանց լեռերից: Հիշե՛նք, որ խառնվելով Կուր գետին թափվում է Կասպից ծով:

[1] **Հր. Սիմոնյան,** Հայոց պատմություն, ԵՊՀ հրատ., Երևան 2012, էջ՝ 8:

ՊԱՏԿԵՐ № 5



Աղյուսակ № 5

ՀԻՇԵՆՔ՝			
Եփրատ	Առաջավոր Ասիայի ամենաերկար գետն է՝ 3065 կմ		
Ճորոխ	345 կմ		
Տիգրիս	Ամենաջրառատը՝ 1850 կմ, Հայաստան է մտնում 400 կմ		
Կուր	1113 կմ		
Արաքս / Երասխ	Վտակներն են՝ Ախուրյան, Քասախ, Հրազդան, Արփա, Որոտան, Ողջի, Տղմուտ	Ամբողջությամբ մտնում է Հայկական լեռնաշխարհի տարածքում	Ունի՝ 1072 կմ, Հայաստանի և Թուրքիայի հետ սահման է 200 կմ

2.5 Հայաստանի պատմավարչական բաժանումները

Մտքի քարտեզագրման միջոցով, աշակերտների 6 – րդ խումբը կազմում է Հայկական լեռնաշխարհում Մեծ Հայքի և Փոքր Հայքի մոտավոր պատկերները: Անպայման պետք է աշակերտներին, բացատրել, որ Փոքր Հայքի տարածքը հիմնականում եղել 80.000 կմ^2 , սակայն տատանվել է 70.000 – 130.000 կմ^2:

ՊԱՏԿԵՐ № 6



Այս ամենից հետո, աշակերտները պատմական քարտեզի միջոցով ներկայացնում են Մեծ ու Փոքր Հայքերը: Միանշանակ, սովորողները պետք է առանձնացնեն աշխարհները կամ նահանգները. առաջնահերթ բացատրում ենք, որ ըստ V – VII դարերի «Աշխարհացոյցի» համաձայն վարչական միավորները կոչվել են ***նահանգներ*** կամ ***աշխարհներ***::

ՄԵԾ ՀԱՅՔ *15 նահանգներ կամ աշխարհներ*	ՓՈՔՐ ՀԱՅՔ[1] *3 նահանգներ կամ աշխարհներ*
Գուգարք, Տայք, Բարձր Հայք *(Կարնո աշխարհ),* Մոկք, Տուրուբերան, Պարսկահայք, Ծոփք *(Չորրորդ Հայք),*	Առաջին Հայք – գլխավոր կենտրոնը Կեսարիա, Երկրորդ Հայք – Սեբաստիա, Երրորդ Հայք – Մալաթիա

[1] **Լեո,** Երկերի ժողովածու տասը հատորով, Հայաստան հրատ., Երևան 1966, էջ՝ 167:

Վասպուրական, Արցախ, Ուտիք, Փայտակարան, Սյունիք, Այրարատ, Մոկք, Կորդուք *(Կորճայք)*	
ՀԻՇԵ՛Լ	
Տարածքը՝ 311.000 կմ^2 , ունի 15 աշխարհներ կամ նահանգներ, 191 գառվառ, որից 37 – ը Վասպուրականում է, իսկ 20 – ը՝ Այրարատում: Տարածքով ամենամեծը Այրարատն է, իսկ գավառների քանակով՝ Վասպուրականը:	Տարածքը՝ 80.000 կմ^2, ունի 3 աշխարհներ կամ նահանգներ

Հայկական լեռնաշխարհ	Հայաստանի Հանրապետություն *(21 – րդ դար)*
✓ ***Տարածքը*** ՝400.000 կմ^2 ✓ ***Սահմանը*** ՝Փոքր Ասիա թերակղզուց արևելք մինչև Կուր – Արաքսյան դաշտավայր ✓ ***Լեռնաշղթաներ*** ՝Փոքր Կովկասի Զավախքի, Գուգարք, Գեղամա, Զանգեզուր, Արցախի լեռներ ✓ ***Լեռներ*** ՝Մեծ և Փոքր Մասիս, Սիփան ✓ ***Լճեր*** ՝Սևանա լիճ / Գեղամա ծով Վանա լիճ / Բզնունյաց ծով Կապուտան / Ուրմիա լիճ ✓ Հայկական լեռնաշխարհում է Նեմրութի խառնարանային լիճը ✓ ***Գետեր*** ՝Եփրատ, Ճորոխ, Տիգրիս, Կուր, Արաքս / Երասխ	✓ ***Տարածքը*** ՝29.743 կմ^2 ✓ ***Սահմանը*** ՝հս.Վրաստանին ալ.՝ Ադրբեջանին հվ.՝Իրանին ատ.՝ Թուրքիային ✓ ***Լեռնաշղթաներ*** ՝Գեղամա, Զանգեզուր ✓ ***Լեռներ*** ՝Արագած, Կապուտջուղ, Աժդահակ ✓ ***Լիճ*** ՝Սևանա լիճ / Գեղամա ծով ✓ ՀՀ – ում է Արագածի վրայի Քարի լճակը ✓ ***Գետ*** ՝Արաքս / Երասխ 1072 կմ – ից միայն 200 կմ է սահման Հայաստանի և Թուրքիայի հետ

Այս տարբերակումից հետո, օգտվում ենք ԳՈՒՍ – ի մեթոդից, որպեսզի հասկանանք՝ ինչն է հետաքրքրում աշակերտներին, որ ամփոփ հարցերի ընթացքում չեն արտահայտել, կամ գուցե, մոռացել են:

Ի՞նչ գիտեինք	Ի՞նչ իմացանք	Ի՞նչ կուզենայինք իմանալ
❖ Հայ ժողովրդի բնածին հայրենիքը Հայկական լեռնաշխարհն է:	❖ Ճիշտ է, տարածքը բավական շատ է փոքրացել, բայց հիշենք Սենեկայի մտքերից մեկը՝ *«Հայրենիքը սիրում ես ոչ թե նրա համար, որ մեծ է, այլ նրա համար, որ քոնն է»:*	❖ Ո՞րն է տարածքային կորուստների պատճառը՝ ազգային բնավորություն, թե՞սխալ կառավարման համակարգը:

❖ Հայկական լեռնաշխարհի բուսական և կենդանական աշխարհի մասին	❖ Որքան է վնասվել ներկայիս ՀՀ տարածքի բուսական և կենդանական աշխարհը	❖ Հնարավո՞ր է վերականգնել: Ի՞նչ կարելի է անել:
❖ Գետերի, լճերի անվանումները	❖ Դրանց կմ – ը	❖ Ինպե՞ս են օգտագործում այդ գետերը, վերաբերմունքը լճերի պահպանման հարցում
❖ Հարուստ պատմամշակութային պատմություն	❖ Ցավոք, մնացել է ախոյանների ձեռքերում, իսկ իրենք բոլոր հնարավոր ճանապարհները կիրառում են հային պատկանող մշակությային արժեքները վերացնելուն:	❖ Ինչե՞ս պայքարել մշակութային կողոպուտի, պատմական արժեքների վերացման դեմ: Արդյո՞ք միջազգային կազմակերպություններ ը կարող են միաջամտել, եթե այո՛, ինչու չեն միջամտում, այլ միայն ֆորմալ են ներկայանում այս հարցում:
❖ Որդան կարմիրը Արարատյան դաշտում է:	❖ Կար նաև որդան կապույտ, որն անհետացավ միջանադարում:	❖ Կային ուրիշ գույնի որդեր, բացի այս երկու տեսակից:

❖ Լեռնաշխարհի իշխող բարձրադիր դիրքը ռազմավարական լուրջ կարևորություն է ունեցել։	❖ Իմացան բարձրադիր դիրքի այլ առավելությունների մասին։	❖ Արդի շրջանում, նույնպես կարևոր է բարձրադիր դիրքը։
❖ Մետաքսի ճանապարհի մասին։	❖ Մետաքսի ճանապարհի երկարությունը և փլուզման պատճառները։	❖ Հնարավոր է հիմա վերականգնել՝ որպես պատմամշակութային արժեք։
❖ Հայաստանը միջազգային առևտրի խաչմերուկ էր, ինքնատիպ քաղաքակրթությունների զարգացման հարցում	❖ Տեղեկացան, որ հայը բոլոր ժամանակներում ունեցել է ստեղծագործող ունակություն, պարզապես, որոշ խոչընդոտների դեպքում չի կարողանում հասնել զարգացած երկրների աստիճանին։	❖ Ինչպե՞ս լուծել այս խնդիրը։

Հավելենք, որ ԳՈՒՍ – ի մեթոդը չունի սահմանափակում այն յուրատեսակ է յուրաքանչյուր աշակերտի համար։ Դրա համար կարող ենք մեթոդով անհատական առաջադրանքներ հանձնարարել։

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Եկեք ընդունենք մի պարզ և հասարակ տեսակետ, այն է՝ ուսուցչի վարպետությունը չի կայանում տարատեսակ մեթոդներ կիրառելու մեջ: Մեթոդի ընտրությունը կարևորվում է նրանով, որ սովորեցնողը կարողանում է սովորողին դասանյութը հետաքրքիր և դյուրըմբռնելի դարձնել:

Վերոգրյալում արդեն մեկնաբանել ենք թեմայի՝ առաջին հայացքից անհետաքրքիր թվալու մասին, հետևաբար զանազանման միջոցով կարողացանք ապահովել նյութի հասանելիությունը:

Դասի մեջ շատ են եզրույթները, հստակ երևում է ներկայիս ՀՀ տարածքում մեզ հասած բնական և պատմական արժեքների սակավությունը: Պարզ ներկայցված է՝

1. *Հայկական լեռնաշխարհի առատությունը բնական աշխարհում*
2. *Բուսական և կենդանական աշխարհի լիառատությունը*
3. *Պատմամշակութային արժեքների ինքնատիպությունը*
4. *Հայկական լեռնաշխարհի դերը հնագույն աշխարհում*
5. *Ներկայիս ՀՀ – ում մեզ հասած տարածքները, գետերի և լճերի քանակը*
6. *Սևանի ընդհանուր վիճակը 21-րդ դարում*
7. *Ձկնատեսակների ոչնչացումը*
8. *Պատմամշակութային արժեքների նկատմամբ անտարբերությունը և այլն:*

Հիմա այս ձևը ինչպե՞ս որակել՝ անտարբերություն, ազգային ծուլություն, թե՞..... Կարող ենք մի կարևոր տեսակետ արտահայտել, այն է՝ մեր կրտսեր սերունդը նայում է մեզ, մեր վարքին, մեր աշխարհընկալմանն ու աշխարհայացքին, ուրեմն՝ պետք է հարցին մոտենալ ոչ թե փաղաքշական տարբերակով, այլ՝ խիստ և հստակ պահանջարկով՝ սովորողների մեջ արմատավորելով սկզբունքներ հայոց պատմության նկատմամբ:

Ճիշտ է Մովսես Խորենացին ասել է՝ *«Չկա ստույգ պատմություն, առանց ժամանակագրության»,* բայց յուրաքանչյուր հայ մարդ պարտավոր է պահել և պահպանել ազգայինը, այն ինչ մեզ եկել և հասել է մինչև մեր օրերը, հետևաբար, էական չէ դա առասպել է, թե իրականություն, էականը այն է, որ ստացված տեղեկությունը պատկանում է հայ ժողովրդին:

«Հայկական լեռնաշխարհ» թեման ոգեշնչող և լայնածավալ տեղեկություն է հաղորդում Հայաստանի պատմաշախարհագրական ակունքների մասին.

1. Սովորեցնում ենք լակոնիկ և դիպուկ նկարագրել սեփական պատմությունը
2. Ճիշտ և ներկայանալի մեկնաբանել հայոց պատմությունը
3. Ձևավորել պատմական մտածողություն և վերլուծություն
4. Կարողանալ յուրաքանչյուր խնդրին ռեալ լուծում տալ
5. Ընդլայնել աշխարհայացքն ու աշխարհընկալումը և այլն։

Անվերջ թվելու և նկարագրելու հետ մեկտեղ, անհրաժեշտ է այս ամենը արմատավորել հայկական գիտակրթական համակարգում՝ նախակրթարանից մինչև ակադեմիական կրթություն։

Հուսով ենք, այս հակիրճ հետազոտական աշխատանքը իր ուրույն նշանակությունը կունենա։

«Աշխարհում կա երկու դժվար բան՝ կրթել և կառավարել»:

Իմմանուել Կանտ

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Ուսումնասիրություններ՝

1. **Ս. Խաչատրյան,** Ուսուցման արդյունավետ հնարներ, Երևան 2020:
2. **Հ. Գաբրիելյան,** Հայկական լեռնաշխարհ, ԵՊՀ հրատ., Երևան 2000:
3. **Հր. Սիմոնյան,** Հայոց պատմություն, ԵՊՀ հրատ., Երևան 2012:
4. **Լեռ,** Երկերի ժողովածու տասը հատորով, Հայաստան հրատ., Երևան 1966:

Հանրագիտարաններ՝

1. Հայկական սովետական հանրագիտարան, հտ. I, Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի հրատ., Երևան 1974:
2. Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հտ. I, ԵՊՀ հրատ., Երևան 1986:
3. Հայաստանի բնաշխարհ *(հանրագիտարան),* Երևան 2006:

Բառարաններ՝

1. **Ստ. Մալխասեանց**, Հայերէն բացատրական բառարան, I հտ., Հայկական ՍՍՌ պետական հրատ., Երևան 1944:

Հոդվածներ՝

1. **Ռ. Նահապետյան,** հոդված՝ «Հույն աշխարհագիր Ստրաբոնի ազգագրական տեղեկությունները Հայաստանի և հայերի մասին», ***մատչելի է՝*** http://ysu.am/files/1-1475054501-.pdf ***հասանելի է՝[21.08.2022թ.]***

Համացանց՝

Մատչելի է՝https://www.ecolur.org/hy/news/water/2750/ ***հասանելի է՝[21.08.2022թ.]***

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն.....2

ԳԼՈՒԽ I

Աշխատանք աշակերտների հետ

(նկարագիր).....3

ԳԼՈՒԽ II.....6

Հայկական լեռնաշխարհի սահմանները 6

2.1 Հայկական լեռնաշխարհի լեռնաշղթաները: 8

2.2 Հայկական լեռնաշխարհի և ՀՀ ամենաբարձր լեռնագագաթները:.....9

2.3 Հայկական լեռնաշխարհի խոշոր լճերը.....10

2.4 Հայկական լեռնաշխարհի գետերը 13

2.5 Հայաստանի պատմավարչական բաժանումները 15

Եզրակացություն.....21

Գրականության ցանկ 23